[ւր] հ[նու]թե[ան] և նամակ պահպանութեան։ Շնորհք առաքելական և ա[ստուա]ծային բազմագեղ ա[ւր] հնութի[ւն]ն հանդերձ նախախնամական գթութ[եամբ] վերայ ա[ստուա]ծապահ և ք[րիստո]սախնամ գաւառացդ և վեհախնամ քաղաքացդ և բարեպաշտ ժողովրդոցդ։ Նախ, երեւանցոցդ, կաղկցոցդ, թաւրիզեցոցդ, դաշտեցոցդ, գաւրապատեցոցդ։ Նաեւ Լինջանու, Ալիջանու, Գանդիմանու և Զղախսոռու, համօրէն և միագումար սրբազան քահանայիցդ, արուեստաւորացդ և միանգամայն ամ[ենայն] ժողովրդոցդ, արանց և կանա[ն]ց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից և ամ[ենայն] չափու հասակի և տիոց, ի Քրիստոս Աստուած հաւատացելոց, ամէն։ . . . Արդ մեր կամք և խորհուրդն ըստ այսմ բանի այն էր՝ թէ օգուտ և շահ հասարակաց հոգեւոր փրկութե[ան] լինէր, ի տեղիս տեղիս վանք և միաբանք բազմանայր և խրատն և մխիթարութ[իւն]ն հոգեւոր ի հեռաւոր ժողովրդենէն անպակաս լինէր։ Սակս որոյ և որոշեցաք զձեզ ի վանիցն Ջուղայու։ Այլ այնմ զի տեսաք, թէ օգուտ այնչափ ոչ երեւեցաւ ի բաժանումէն, որպէս և կարծէաք, մանաւանդ թէ երկպառակութի[ւն]ն և թշնամութի[ւն]ն սերմանեցաւ ի մէջ սիրոյ և միաբանութեան։ Յաղագս այսորիկ և մեք ըստ առաջին կարգին սահմանեցաք զձեզ սեփական Թեմ և Վիճակ Սբ.